

ԿՈՆԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳԻՐ

Ծանուցման հասցե՝
ք.Երևան, Մաշտոցի 33/1շենք,
թիվ 5 գրասենյակ

Հայաստանի Հանրապետության
Կառավարությանը

Վարչապետ՝ պարոն Նիկոլ Փաշինյանին

21 հուլիս 2020թ.

ք.Երևան

ԿՈՆԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳԻՐ

Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝

- բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս՝ բոլոր հանրային բաց տարածքներում, դիմակ կրելը պարտադիր է՝ բացառությամբ մինչև 6 տարեկան երեխաների և ֆիզիկական վարժություններ կամ հեծանվավարություն իրականացնելիս.
- անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում պարտադիր է դիմակ կրելը, եթե վարորդից բացի մեքենայում առկա է առնվազն մեկ ուղևոր..:

Պարետը վերոհիշյալ որոշումը կայացրել է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը:

Դեռ չանդրադառնալով պարետի կողմից ընդհանրապես սահմանափակումներ սահմանելու իրավասությանը, գտնում ենք, որ պարետի կողմից հանրային բաց տարածքներում միայնակ մարդու կողմից դիմակ կրելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցում ընդհանրապես անդամների կողմից դիմակ կրելու սահմանափակումն իրավաչափ չէ և ենթակա է վերացման, հետևյալ պարճառաբանությամբ.

Անվիճելի փաստեր

Մարդու շնչառությունը կյանքի գոյատևման ամենակարևոր նախապայմանն է: Շնչառության միջոցով մարդը ստանում է մթնոլորտային օդը, որից թթվածինն առանձնացնում է, իսկ ածխաթթու գազն՝ արտաշնչում:

Յուրաքանչյուր մարդ ունի մաքուր օդ շնչելու իրավունք

Թթվածինը մտնում է բոլոր այն նյութերի բաղադրության մեջ, որոնցից կազմված են կենդանի օրգանիզմները:

Դիմակը կրելու դեպքում, թթվածնի հոսքը որոշ չափով սահմանափակվում է: Դիմակը երկարաժամկետ կրելու դեպքում, մարդու ինքնազգացողությունը վատանում է¹:

Մարդու մարմնի օդ շնչելու իրավունքը

Բնական իրավունքի տեսության համաձայն պետության ստեղծած դրական (պոզիտիվ) իրավունքից բաց գոյություն ունի նաև դրական իրավունքից վեր կանգնած, բոլոր մարդկանց համար ընդհանուր, **բնական իրավունքը**, որը հիմնվում է բնական իրավունքի պահանջների վրա (օրինակ՝ կյանքի իրավունքը):

Իրավական պետությունում բնական և դրական (պոզիտիվ) իրավունքների հակադրելու հիմքեր չկան:

«Սահմանադրության, մասնավորապես 1-ին, 3-րդ և 39-րդ հոդվածներից բխում է, որ մարդն ունի մարմնի օդ (թթվածին) շնչելու իրավունք:

Այս իրավունքը չի կարող այնքան և այնպես սահմանափակվել, որ մարդու առողջությանը կամ կյանքին վնաս պատճառվի:

Համաչափությունը կամ միջամտության թեստը

Հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ **համաչափության սկզբունքն** է, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների մի այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

«Սահմանադրության 76-րդ հոդվածի ձևակերպումից հետևում է, որ արտակարգ դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել **միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը**:

Այսպիսով, արտակարգ դրությունը, որպես վտանգին արձագանքելու ժամանակավոր իրավական միջոց, պետք է միայն այնպիսի սահմանափակումներ նախատեսի, որոնք համապատասխանում են վտանգի վերացման կամ կանխարգելման նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

¹ Այս փաստը հաստատվում է նաև պարետի որոշմամբ, որով սահմանափակումը վերացվել է որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձանց համար՝ քրոնիկ շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն, էմֆիզեմա կամ բրոնխիտ՝ ծանր շնչառական անբավարարության առկայության դեպքում, ինչպես նաև 3-րդ, 4-րդ ֆունկցիոնալ դասի քրոնիկ սրտային անբավարարություն ունեցող անձանց դեպքում:

Ա.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (A. v United Kingdom [2009] ECHR 301 paras. 181 and 190) ՄԻԵԴ-ն ընդունել է, որ պետության կողմից... արձագանքը եղել է լեգիտիմ, սակայն գտել է, որ անհամաչափ են եղել այն միջոցառումները, որոնք պետությունն իրականացրել է այդ օբյեկտիվորեն առկա արտակարգ դրությանն արձագանքելիս:

Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի գործով ՄԻԵԴ-ը որոշել է, որ անհրաժեշտ և օրինական ճանաչվելու համար պետք է պարզ լինի, որ անհնարին է մարդու իրավունքների նկատմամբ նվազ ներգործություն ունեցող այլ միջոցներով հասնել խնդրի լուծմանը (Lawless v. Ireland, A 3 (1961)):

Ամփոփում

Տվյալ դեպքում, մարդու շնչելու իրավունքը սահմանափակվել է, որպեսզի դրանով մարդը չվարակի այլ մարդու, կամ չվարակվի այլ մարդուց:

Այս միջամտության տրամաբանությունը չի երևում, երբ պարետը դիմակ կրելու պահանջ է դնում բացօթյա տարածքում միայնակ զբոսնող մարդու առջև: Ստացվում է, որ մարդը չի կարող վարակել մեկ այլ մարդու կամ վարակվել նրանից, սակայն պարտավոր է դիմակով շնչել:

Տրանսպորտային միջոցում գտնվող ընտանիքի անդամներին դիմակ կրելը պարտադրելը նույնպես չի դիմանում քննադատության, քանի որ ընտանիքի անդամներն իրենց բնակարանում կարող են առանց դիմակ միմյանց հետ շփվել: Միայն այն ենթադրյալ փաստարկը, որ այդ կերպ պետությունը կարող է առավել արդյունավետ վերահսկել ընտանիքի անդամներ չհանդիսացող անձանց տեղափոխությունը տրանսպորտային միջոցով, չի դիմանում քննադատությանը: Ստացվում է, որ պետությունն իր վերահսկողություն կատարելը հեշտացնելու համար մարդուն զրկում է շնչելու իրավունքից, ինչն ուղղակիորեն չի համապատասխանում միջամտության թեստին:

Գոյաբանական տեսակետից իրավունքը ձևական հավասարություն է, որն իր մեջ ներառում է այնպիսի հատկությունների հանրագումար, ինչպիսիք են՝ հավասարությունը, ազատությունը և արդարությունը:

Հասարակությունը չի կարող ընդունել անարդար պատվիրանները, որոնք հակասում են մարդու բնական իրավունքին:

Առաջարկը

Հիմք ընդունելով «Հանրագրերի մասին» օրենքի 6-րդ և 14-րդ հոդվածների պահանջները,

Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝

- Պարտերի կողմից հանրային բաց տարածքներում միայնակ մարդու կողմից դիմակ կրելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցում ընդհանրի անդամների կողմից դիմակ կրելու սահմանափակումները վերացնել:

Հանրագրի հետ կապված հայտարարություններ

1. Սույնով տալիս ենք մեր համաձայնությունը սույն կոլեկտիվ հանրագիրը հրապարակելու վերաբերյալ.
2. Սույն կոլեկտիվ հանրագրով պատասխանատու անձը հանդիսանում է Արա Զոհրաբյանը (ծանուցման հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 33/1շենք, թիվ 5 գրասենյակ):

Դիմողներ՝

Արա Գագիկի Զոհրաբյան (**փաստաբան**, հասցե՝ ք.Երևան, Զաքյան 8շենք, բնակարան 24, կապի միջոց՝ ara@lawgroup.am).

Մանե Գուրգենի Կարապետյան (**փաստաբան**, հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 3շենք, բնակարան 30, կապի միջոց՝ mane.karapetyan@advocates.am).

Սիմոն Ալբերտի Բաբայան (**փաստաբան**, հասցե՝ ք.Երևան, Շինարարների 15/1շենք, բնակարան 89, կապի միջոց՝ simon.babayan@gmail.com).

Մելանյա Սարգսի Առուստամյան (**փաստաբան**, հասցե՝ ք.Երևան, Կողբացի 3 շենք, բնակարան 19, կապի միջոց՝ melany-a@mail.ru).

Գևորգ Կարապետի Մկրտչյան (**փաստաբան**, հասցե՝ ք.Էջմիածին, Ալավերդյան 44, կապի միջոց՝ gevorgmkrтчian@gmail.com).

Արաքս Հրաչի Վարդանյան (**փաստաբան**, հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 17շենք, բնակարան 29, կապի միջոց՝ vardanyan.araks@gmail.com).